## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի փետրվարին

**(վերլուծություն)**

2016 թվականի փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 13333 գործարք, որոնց քանակը 2016 թվականի հունվար ամսվա համեմատ աճել է 37.2 %-ով, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ 10.7 %-ով:

2016 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2016 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2016 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3897 օտարման գործարքի 69.6 %-ը կազմել է առուվաճառքը, 29.3 %-ը՝ նվիրատվությունը և 1.1 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 37.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի փետրվարին, 2016 թվականի հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքներն աճել են 66.0 %-ով, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ 1.6 %-ով:

2016 թվականի փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 59.6 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի փետրվարին, 2016 թվականի հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 92.7 %-ով, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ 16.8 %-ով:

2016 թվականի փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | փետրվար 2015 թ. | փետրվար 2016 թ. | հունվար 2016 թ. |
| **Կենտրոն** | 428000 | 428000 | 428000 |
| **Արաբկիր** | 356600 | 356900 | 356800 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 282600 | 283000 | 282900 |
| **Նոր Նորք** | 253000 | 253800 | 253700 |
| **Ավան** | 260500 | 261450 | 261350 |
| **Էրեբունի** | 251850 | 252300 | 252250 |
| **Շենգավիթ** | 256900 | 257500 | 257400 |
| **Դավթաշեն** | 275600 | 276500 | 276300 |
| **Աջափնյակ** | 249700 | 250750 | 250650 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 243000 | 243850 | 243750 |
| **Նուբարաշեն** | 156600 | 157150 | 157050 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի փետրվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի հունվարի համեմատ աճել են 0.04 %-ով:

2016 թվականի փետրվարին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 294 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի հունվարի համեմատ աճել է 53.1 %-ով, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 16.2 %-ով:

2016 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | փետրվար 2015 թ. | փետրվար 2016 թ. | հունվար 2016 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 116000 | 116050 | 116000 |
| | Ապարան | 57500 | 58250 | 58100 |
| | Թալին | 65850 | 66600 | 66500 |
| Արարատ | Արտաշատ | 97600 | 98600 | 98500 |
| | Մասիս | 115800 | 115800 | 115800 |
| | Վեդի | 101000 | 101600 | 101550 |
| | Արարատ | 75850 | 77300 | 77200 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154100 | 154200 | 154100 |
| | Արմավիր | 121200 | 121250 | 121200 |
| | Մեծամոր | 87500 | 87600 | 87550 |
| Գեղարքունիք | Սևան | 99200 | 99400 | 99400 |
| | Գավառ | 60000 | 60400 | 60350 |
| | Մարտունի | 107700 | 107700 | 107700 |
| | Վարդենիս | 44800 | 45150 | 45050 |
| | Ճամբարակ | 28700 | 28750 | 28750 |
| Լոռի | Վանաձոր | 88500 | 88600 | 88500 |
| | Ստեփանավան | 74600 | 74750 | 74650 |
| | Սպիտակ | 99800 | 99850 | 99850 |
| | Ալավերդի | 55100 | 55500 | 55400 |
| | Տաշիր | 47300 | 47400 | 47350 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20300 | 20500 | 20500 |
| Կոտայք | Աբովյան | 155000 | 155150 | 155100 |
| | Նոր Հաճն | 128550 | 128550 | 128550 |
| | Բյուրեղավան | 108100 | 108250 | 108200 |
| | Եղվարդ | 109350 | 109650 | 109550 |
| | Հրազդան | 63800 | 63900 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292400 | 292400 | 292400 |
| | Չարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109200 | 109350 | 109250 |
| | Արթիկ | 66700 | 67100 | 67000 |
| | Մարալիկ | 40700 | 40950 | 40900 |
| Սյունիք | Գորիս | 122850 | 123500 | 123400 |
| | Կապան | 93500 | 94750 | 94650 |
| | Սիսիան | 91800 | 92100 | 92000 |
| | Մեղրի | 81500 | 82800 | 82650 |
| | Ագարակ | 47200 | 47600 | 47500 |
| | Քաջարան | 94600 | 94750 | 94650 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 94900 | 95100 | 95000 |
| | Եղեգնաձոր | 125500 | 126050 | 125900 |
| | Ջերմուկ | 112900 | 113100 | 112950 |
| Տավուշ | Դիլիջան | 113700 | 115300 | 115200 |
| | Իջևան | 118200 | 118550 | 118450 |
| | Բերդ | 60200 | 60400 | 60300 |
| | Նոյեմբերյան | 49850 | 50300 | 50200 |
| | Այրում | 31850 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի հունվարի համեմատ աճել են 0.1 %-ով:

2016 թվականի փետրվարին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 358 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 109 գործարք, մարզերում՝ 249 գործարք: 2016 թվականի փետրվարին, 2016 թվականի հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 58.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ 2.4 անգամ, իսկ մարզերում՝ 37.6 %-ով: 2016 թվականի փետրվարին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.8 %-ով, ընդ որում, Երևանում՝ 14.7 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 0.4 %-ով:

2016 թվականի փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ$^2$ և տնամերձի 400.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | փետրվար 2015 թ. | փետրվար 2016 թ. | հունվար 2016 թ. |
| **Կենտրոն** | 476100 | 476100 | 476100 |
| **Արաբկիր** | 383000 | 383000 | 383000 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 295000 | 295000 | 295000 |
| **Նորք-Մարաշ** | 319200 | 319200 | 319200 |
| **Ավան** | 270500 | 270500 | 270500 |
| **Էրեբունի** | 239750 | 239750 | 239750 |
| **Շենգավիթ** | 255000 | 255000 | 255000 |
| **Դավթաշեն** | 276000 | 276000 | 276000 |
| **Աջափնյակ** | 250050 | 250050 | 250050 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 238000 | 238000 | 238000 |
| **Նուբարաշեն** | 150800 | 150800 | 150800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի փետրվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի հունվարի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ$^2$ և տնամերձի 1000.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | փետրվար 2015 թ. | փետրվար 2016 թ. | հունվար 2016 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136200 | 136200 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100000 | 100000 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94800 | 94950 | 94950 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 41000 | 41100 | 41100 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100000 | 100800 | 100800 |
| | Ստեփանավան | 90000 | 91100 | 91100 |
| | Սպիտակ | 114000 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 50200 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157000 | 157300 | 157300 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118500 | 119250 | 119250 |
| | Արթիկ | 63100 | 63350 | 63350 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130000 | 130000 |
| | Կապան | 100000 | 100650 | 100650 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84500 | 84600 | 84600 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90050 | 90150 | 90150 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116750 | 116750 |
| | Ջերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 113000 | 115400 | 115400 |
| | Իջևան | 123200 | 123200 | 123200 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի հունվարի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի փետրվարին հանրապետությունում օտարվել է 1359 միավոր (746.31 հա) հող, որից Երևանում՝ 100 միավոր (20.81 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 833 միավոր (683.52 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.22 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 401 միավոր (29.47 հա), որից Երևանում՝ 56 միավոր (2.55 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 106 միավոր (25.82 հա), որից Երևանում՝ 39 միավոր (18.00 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 9 միավոր (0.99 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.04 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 3 միավոր (5.29 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 7 միավոր (1.22 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 1031 միավորի (558.30 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 81 միավոր (19.75 հա), նվիրատվության գործարք՝ 316 միավորի (187.05 հա), որից Երևանում՝ 17 միավոր (0.89 հա) և փոխանակության գործարք՝ 12 միավորի (0.95 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.17 հա):

Հանրապետությունում 2016 թվականի փետրվարին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 14.3 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 8.6 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 30.8 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 128.82 հա, որից 124.63 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.4 %-ը կամ 210 միավորը (56.84 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 29 միավոր (0.71 հա), իսկ 78.9 %-ը կամ 813 միավորը (500.44 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 51 միավոր (19.04 հա): 2016 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 8 գործարք /1.03 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2016 թվականի փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 0 | 0.00 | 16 | 0.57 | 13 | 0.14 | 3 | 0.22 | 2 | 0.04 | 29 | 1.55 | 17 | 17.22 |
| Արագածոտն | 2 | 3.20 | 1 | 0.10 | 3 | 0.05 | 3 | 0.10 | 49 | 85.01 | 0 | 0.00 | 13 | 1.24 | 1 | 0.002 |
| Արարատ | 11 | 3.28 | 0 | 0.00 | 23 | 1.10 | 3 | 0.01 | 91 | 53.39 | 0 | 0.00 | 37 | 3.04 | 0 | 0.00 |
| Արմավիր | 2 | 0.62 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.001 | 84 | 124.02 | 3 | 0.33 | 37 | 3.84 | 1 | 0.02 |
| Գեղարքունիք | 8 | 27.16 | 0 | 0.00 | 3 | 0.79 | 15 | 2.00 | 25 | 14.69 | 0 | 0.00 | 15 | 2.06 | 1 | 0.05 |
| Լոռի | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.08 | 0 | 0.00 | 92 | 44.74 | 0 | 0.00 | 7 | 0.40 | 2 | 0.02 |
| Կոտայք | 9 | 11.95 | 0 | 0.00 | 40 | 0.63 | 7 | 0.03 | 52 | 42.71 | 1 | 0.10 | 46 | 3.78 | 3 | 1.53 |
| Շիրակ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 8 | 0.18 | 4 | 0.02 | 70 | 50.80 | 0 | 0.00 | 7 | 0.70 | 3 | 0.04 |
| Սյունիք | 1 | 0.01 | 1 | 0.29 | 8 | 0.29 | 3 | 0.10 | 73 | 31.82 | 0 | 0.00 | 6 | 0.83 | 2 | 0.41 |
| Վայոց ձոր | 2 | 1.82 | 0 | 0.00 | 1 | 0.08 | 0 | 0.00 | 16 | 5.31 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.10 |
| Տավուշ | 3 | 1.37 | 1 | 0.13 | 4 | 0.34 | 4 | 0.19 | 14 | 4.96 | 0 | 0.00 | 3 | 0.14 | 1 | 0.02 |
| Ընդամենը | 38 | 49.41 | 3 | 0.52 | 111 | 4.11 | 53 | 2.59 | 569 | 457.67 | 6 | 0.47 | 200 | 17.58 | 34 | 19.41 |

Ստորև ներկայացված է 2016 թվականի փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 18 | 0.47 | 0 | 0.00 | 11 | 0.40 | 7 | 0.07 | 11 | 0.24 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.17 | 6 | 0.07 |
| Արագածոտն | 1 | 0.006 | 0 | 0.00 | 1 | 0.006 | 0 | 0.00 | 8 | 3.45 | 2 | 3.20 | 1 | 0.10 | 2 | 0.05 | 3 | 0.10 |
| Արարատ | 2 | 0.006 | 0 | 0.00 | 1 | 0.003 | 1 | 0.003 | 35 | 4.39 | 11 | 3.28 | 0 | 0.00 | 22 | 1.10 | 2 | 0.01 |
| Արմավիր | 1 | 0.001 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.001 | 2 | 0.62 | 2 | 0.62 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Գեղարքունիք | 2 | 0.12 | 0 | 0.00 | 1 | 0.09 | 1 | 0.03 | 24 | 29.83 | 8 | 27.16 | 0 | 0.00 | 2 | 0.70 | 14 | 1.97 |
| Լոռի | 3 | 0.02 | 0 | 0.00 | 3 | 0.02 | 0 | 0.00 | 2 | 0.06 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.06 | 0 | 0.00 |
| Կոտայք | 35 | 0.09 | 0 | 0.00 | 35 | 0.09 | 0 | 0.00 | 21 | 12.52 | 9 | 11.95 | 0 | 0.00 | 5 | 0.54 | 7 | 0.03 |
| Շիրակ | 3 | 0.013 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 1 | 0.003 | 9 | 0.18 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 6 | 0.17 | 3 | 0.01 |
| Սյունիք | 2 | 0.004 | 0 | 0.00 | 2 | 0.004 | 0 | 0.00 | 10 | 0.67 | 0 | 0.00 | 1 | 0.29 | 6 | 0.28 | 3 | 0.10 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 1.90 | 2 | 1.82 | 0 | 0.00 | 1 | 0.08 | 0 | 0.00 |
| Տավուշ | 4 | 0.21 | 0 | 0.00 | 1 | 0.12 | 3 | 0.09 | 8 | 1.82 | 3 | 1.37 | 1 | 0.13 | 3 | 0.22 | 1 | 0.10 |
| **Ընդամենը** | **71** | **0.94** | **0** | **0.00** | **57** | **0.74** | **14** | **0.20** | **133** | **55.68** | **37** | **49.40** | **3** | **0.52** | **54** | **3.37** | **39** | **2.39** |

2016 թվականի փետրվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք (0.01 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի փետրվարին, 2015 թվականի փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 4.3 %-ով: Ընդ

որում, Երևանում նվազել է 31.3 %-ով, իսկ մարզերում՝ 0.8 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 19.6 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ աճել է 20.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 4.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 57.1 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի փետրվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 2 | 3.20 | 96.8 | 1041.9 | 569.4 | 23 | 60.02 | 365.0 | 12000.0 | 3595.0 |
| Ապարան | | | | | | 2 | 0.72 | 86.5 | 2727.3 | 630.0 |
| Թալին | | | | | | 19 | 12.26 | 93.6 | 5494.5 | 790.0 |
| Ծաղկահովիտ | | | | | | 5 | 12.01 | 79.5 | 1000.0 | 377.5 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 3 | 0.41 | 99.7 | 1658.9 | 1137.8 | 49 | 15.74 | 335.1 | 10833.3 | 2692.5 |
| Մասիս | | | | | | 13 | 6.64 | 200.0 | 11904.8 | 3228.7 |
| Վեդի | 8 | 2.87 | 90.3 | 313.3 | 165.2 | 25 | 30.09 | 207.0 | 10795.1 | 1943.0 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 42 | 24.81 | 294.3 | 9090.0 | 1327.0 |
| Բաղրամյան | | | | | | 14 | 62.58 | 90.6 | 2561.1 | 922.4 |
| Վաղարշապատ | 2 | 0.62 | 141.4 | 143.9 | 142.7 | 28 | 36.62 | 444.4 | 11764.7 | 1978.5 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 2 | 15.05 | 325.5 | 500.0 | 412.8 | 12 | 4.05 | 199.8 | 1875.0 | 490.0 |
| Ճամբարակ | | | | | | | | 60.5 | 953.3 | 352.0 |
| Մարտունի | | | | | | 1 | 0.02 | 51.1 | 2850.0 | 790.0 |
| Սևան | | | | | | 8 | 2.11 | 52.2 | 2134.8 | 355.0 |
| Վարդենիս | 6 | 12.11 | 115.4 | 418.0 | 207.9 | 4 | 8.50 | 41.2 | 2575.1 | 413.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 7 | 4.79 | 170.4 | 6424.2 | 586.5 |
| Գուգարք | | | | | | 5 | 2.01 | 234.6 | 6065.9 | 823.5 |
| Սպիտակ | | | | | | | | 250.0 | 5555.5 | 675.0 |
| Ստեփանավան | | | | | | 12 | 10.84 | 90.6 | 1686.6 | 418.5 |
| Տաշիր | | | | | | 66 | 22.86 | 45.3 | 1384.4 | 185.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 5 | 6.89 | 136.9 | 692.8 | 297.6 | 13 | 8.37 | 279.3 | 11942.7 | 3946.5 |
| Եղվարդ | 1 | 1.00 | 168.8 | 168.8 | 168.8 | 36 | 33.95 | 174.4 | 11971.8 | 2520.0 |
| Հրազդան | 3 | 4.06 | 85.4 | 897.3 | 510.9 | 3 | 0.39 | 130.5 | 10256.4 | 1035.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 22 | 16.39 | 252.0 | 1693.1 | 645.7 |
| Ամասիա | | | | | | 2 | 2.92 | 40.9 | 261.0 | 136.5 |
| Անի | | | | | | 25 | 20.24 | 110.6 | 546.9 | 452.5 |
| Աշոցք | | | | | | | | 58.5 | 215.8 | 138.5 |
| Արթիկ | | | | | | 21 | 11.24 | 79.4 | 1428.6 | 520.0 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | | | 92.6 | 1023.2 | 787.5 |
| Կապան | | | | | | 43 | 18.70 | 120.0 | 841.6 | 425.3 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մեղրի | | | | | | 16 | 6.82 | 193.0 | 3000.0 | 783.5 |
| Սիսիան | | | | | | 14 | 6.30 | 46.3 | 1977.4 | 600.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 2 | 1.82 | 37.1 | 37.1 | 37.1 | 11 | 3.33 | 125.0 | 10000.0 | 1740.0 |
| Վայք | | | | | | 5 | 1.98 | 58.8 | 1430.7 | 580.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 3 | 0.66 | 213.3 | 3783.8 | 680.0 |
| Իջևան | 3 | 1.37 | 3240.0 | 3240.0 | 3240.0 | 4 | 0.89 | 267.5 | 9454.5 | 1500.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 7 | 3.40 | 46.7 | 7368.4 | 985.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի փետրվարին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ²) | պայմանագրային գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ²) | շուկայական գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 10 | 8712.0 | 130.7 | 22200.0 | 2591.2 |
| Ապարան | 2 | 472.0 | 271.5 | 553.0 | 412.3 | 1 | 700.0 | 124.1 | 609.6 | 390.0 |
| Թալին | | | | | | 2 | 2966.0 | 63.2 | 1454.8 | 152.4 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 93.5 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 15 | 14882.7 | 173.9 | 7140.3 | 906.7 |
| Մասիս | | | | | | 17 | 10277.7 | 187.5 | 25000.0 | 1208.5 |
| Վեդի | 22 | 11013.7 | 684.3 | 3000.0 | 1005.5 | 5 | 5246.0 | 126.1 | 5000.0 | 663.4 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 15 | 17602.0 | 131.6 | 9090.9 | 1215.5 |
| Բաղրամյան | | | | | | 4 | 5271.0 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 18 | 15565.0 | 197.4 | 26528.4 | 1530.7 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 3 | 2716.0 | 186.6 | 1084.3 | 684.0 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 146.8 |
| Մարտունի | 1 | 1000.0 | 112.6 | 112.6 | 112.6 | 8 | 9516.0 | 119.3 | 5000.0 | 280.0 |
| Սևան | | | | | | 1 | 342.0 | 240.0 | 3110.4 | 335.0 |
| Վարդենիս | 1 | 5951.8 | 38.5 | 38.5 | 38.5 | 3 | 7988.0 | 72.5 | 987.2 | 150.4 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 2 | 639.7 | 225.0 | 1650.0 | 952.5 | 2 | 1980.0 | 114.3 | 1388.9 | 216.8 |
| Գուգարք | | | | | | 2 | 1165.0 | 77.9 | 14083.3 | 1260.3 |
| Սպիտակ | | | | | | | | 104.9 | 1348.3 | 202.0 |
| Ստեփանավան | | | | | | 3 | 885.0 | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 1 | 100.0 | 2500.0 | 2500.0 | 2500.0 | 22 | 19163.9 | 264.5 | 35353.5 | 1964.0 |
| Եղվարդ | 4 | 5288.8 | 255.3 | 2985.8 | 1586.6 | 21 | 16311.0 | 173.6 | 27000.0 | 2861.0 |
| Հրազդան | | | | | | 2 | 1388.0 | 117.7 | 34848.5 | 1316.1 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 3 | 640.8 | 2100.0 | 4227.3 | 3157.8 | 6 | 5035.0 | 113.6 | 18750.0 | 335.4 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 72.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անի | | | | | | | | 67.9 | 180.6 | 203.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | 3 | 1038.0 | 891.0 | 2875.0 | 1565.9 | 1 | 1930.0 | 111.8 | 5000.0 | 218.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 4 | 1939.0 | 230.0 | 230.0 | 230.0 | | | 112.2 | 1700.0 | 365.1 |
| Կապան | 1 | 281.8 | 1147.6 | 1147.6 | 1147.6 | 1 | 3580.0 | 67.9 | 2638.9 | 355.0 |
| Մեղրի | 1 | 611.8 | 290.5 | 290.5 | 290.5 | 5 | 4680.0 | 68.5 | 632.9 | 270.0 |
| Սիսիան | | | | | | | | 123.5 | 875.0 | 250.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 1 | 800.0 | 354.5 | 354.5 | 354.5 | | | 96.7 | 7659.6 | 508.5 |
| Վայք | | | | | | | | 120.7 | 1448.3 | 250.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 75.8 | 810.0 | 125.3 |
| Իջևան | 3 | 2216.8 | 172.2 | 3000.0 | 2057.4 | 3 | 1420.2 | 74.1 | 14423.1 | 513.0 |
| Նոյեմբերյան | | | | | | | | 125.0 | 1948.1 | 252.0 |

2016 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 691 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.2 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 75.3 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի փետրվարին, 2016 թվականի հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 66.5 %-ով, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ 13.5 %-ով:

2016 թվականի փետրվարին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 52 բնակարանի, 54 անհատական բնակելի տան, 371 հասարակական և 76 արտադրական նշանակության օբյեկտի, 133 հողի և 5 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի փետրվարին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 4 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի հունվարի համեմատ նվազել է 20.0 %-ով, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2016 թվականի փետրվարին հանրապետությունում վարձակալված 462.16 հա հողից 0.45 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 461.71 հա հողից 421.33 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 33.47 հա արդյունաբերական օբյեկտի, 1.93 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Արարատի մարզում՝ 240.34 հա, որից 237.21 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1474 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 11.1 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի հունվարի համեմատ, աճել է 2.7 անգամ, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ 46.2 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.5 %), անհատական բնակելի տների (25.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (8.9 %) և հողերի (9.6 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 795 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016

թվականի հունվարի համեմատ աճել է 2.7 անգամ, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ 33.6 %-ով:

2016 թվականի փետրվարին հանրապետությունում գրավադրվել է 113.96 հա հող, որից 0.70 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 95.2 %-ը կամ 108.53 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 54.39 հա, որից 52.86 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի փետրվարին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 112 գործարք: 2016 թվականի փետրվարին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի հունվարի համեմատ, աճել է 2.4 անգամ, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 34.9 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 89 գործարք, որը 2016 թվականի հունվարի համեմատ աճել է 3.4 անգամ, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 64.8 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի հունվարի համեմատ, աճել է 9.5 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 20.7 %-ով :

2016 թվականի փետրվարին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1594 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի հունվարի համեմատ, աճել է 66.9 %-ով, իսկ 2015 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել 8.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 12.0 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (14.7 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**